ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հոկտեմբերի 2012թ. **N —— - Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» N345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Մալաթիա-Սեբաստիա Բաբաջանյան փողոցի հ.26/4 շենքի, 51 ոչ բնակելի տարածքը 22.19քմ մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.12102012-01-1240 վկայական, տրված 12.10.2012 թվականին) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գոհար Աբրահամյանին (անձնագիր AK04999155 տրված 10.05.2010թ. 008 -ի կողմից)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում մատուցած համազգային նշանակության բացառիկ ծառայությունների համար հատուկ գնդի գումարտակի հրամանատար կապիտան Ջիվան Զավենի Աբրահամյանին հետմահու շնորհվել է «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի հ.26/4 շենքի, 22.19քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը զբաղեցնում է Ջիվան Զավենի Աբրահամյանի այրի՝ Գոհար Աբրահամյանը, որը ցանկանում է հիմնադրել «Ջիվան Աբրահամյանի անվան» հիմնադրամ և դրա գործունեությունը ծավալել Բաբաջանյան փողոցի հ.26/4 շենքի, 51՝ ոչ բնակելի տարածքում:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի հ.26/4 շենքի, 51 ոչ բնակելի տարածքը՝ 22.19քմ մակերեսով, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.12102012-01-1240 վկայական, տրված 12.10.2012 թվականին):

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 12-ի N345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետի՝ համայնքի սեփականությունը համարվող գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Ջիվան Զավենի Աբրահամյանի այրի՝ Գոհար Աբրահամյանին ոչ բնակելի տարածք հատկացնելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան համայնքի սեփականությունը համարվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ը ՀԱՄԱՐՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան համայնքի սեփականությունը համարվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ